

**Կենսաբանություն, I ՓՈՒԼ  
տևողությունը 60 րոպե  
9-րդ դասարան**

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

Յուրաքանչյուր թեստում առաջարկվում է 4 պատասխան: Ընտրեք միայն մեկը, որը, ըստ Ձեզ, առավել ճիշտ է և ամբողջական:

**1. Կանաչ ջրիմուռները կարող են բազմանալ.**

1. – սեռական ճանապարհով
2. – սպորներով
3. – թալոմի ֆրագմենտացիայով
4. – բոլոր պատասխանները ճիշտ են

**2. Արևածաղիկն ու աշորան պատկանում են բույսերի տարբեր դասերի, քանի որ**

1. – ունեն տարբեր տիպի արմատային համակարգ
2. – տարբերվում են սերմի, ծաղկի և արմատային համակարգի կառուցվածքով
3. – տարբերվում են բջիջների և հյուսվածքների կառուցվածքով
4. – տարբերվում են աշորայի ծաղկի կառուցվածքով

**3. Եզան երիզորդի մարսողությունը**

1. – աղիքային է
2. – ներբջջային է
3. – և աղիքային է և ներբջջային
4. – բացակայում է

**4. Խոտի ցուպիկ (Bacillus subtilis) բակտերիաների կուլտուրա աճեցնելու համար խոտի թուրմը սկզբում եռացնում են 20-30 րոպե, որպեսզի**

1. – սպանեն բոլոր բակտերիաները, բացի խոտի ցուպիկից
2. – բակտերիաները ավելի ակտիվ բազմանան
3. – խոտի ցուպիկը սպորներ առաջացնի
4. – բարձրացնեն խոտի ցուպիկի կենսունակությունը

**5. Դիֆտերիայի հարուցիչները**

1. – սապրոֆիտներ են
2. – մակաբույծներ են
3. – սիմբիոնտներ են
4. – ավտոտրոֆներ են

**6. Մեղուն ի՞նչ տիպի մարմնի խոռոչ ունի**

1. առաջնային
2. երկրորդային
3. խառը
4. չունի մարմնի խոռոչ

**7. Պատրաստի օրգանական նյութերով է սնվում.**

1. – սպիտակ սունկը
2. – պտերները
3. – գորշ ջրիմուռները
4. – լյարդամամուռները

**8. Վիրահատարանի ստերիլիզացիայի մեթոդներից ո՞րն է առավել արդյունավետ ազդում բակտերիաների վրա:**

1. – հատակի լվացումը
2. – օդափոխությունը
3. – ճառագայթումը ուլտրամանուշակագույն ճառագայթներով
4. – օդի տաքացումը մինչև +30° C

9. Ո՞ր հյուսվածքն է բացակայում մարդու օրգանիզմում:

1. – շարակցական
2. – էպիթելային
3. – փոխադրող
4. – մկանային

10. Քաղցի կենտրոնը գտնվում է.

1. – գլխուղեղի ճակատային բլթերում
2. – երկարավուն ուղեղում
3. – մակուղեղում
4. – հիպոթալամուսում

11. Որտե՞ղ է պարունակվում ԱԵՖ-ի առավելագույն քանակը.

1. – մաշկի բջիջներում
2. – միջաձիգ զոլավոր մկաններում
3. – միջողնային սկավառակների բջիջներում
4. – ոսկրային բջիջներում

12. Էուկարիոտների և պրոկարիոտների հիմնական տարբերությունը այն է, որ պրոկարիոտներում բացակայում են.

1. – ռիբոսոմները
2. – ԴՆԹ-ն
3. – բջջային կառուցվածքը
4. – իսկական կորիզը

13. Կարող են բազմանալ.

1. – լիզոսոմները
2. – Գոլջիի ապարատը
3. – ռիբոսոմները
4. – քլորոպլաստները

14. . Ո՞ր միացության մոլեկուլն է եռաշղթա.

1. – ԴՆԹ -ի
2. – ՌՆԹ-ի
3. – կոլագենի
4. – ֆիբրինի

15. Ստորև բերված հասկանիշներից ո՞րն է բնորոշ ի-ՌՆԹ-ին.

1. – միաշղթա է, պարունակում է դեզօքսիռիբոզ և ինֆորմացիա
2. – երկշղթա է, պարունակում է ռիբոզ, փոխանցում է ինֆորմացիան
3. – միաշղթա է, պարունակում է ռիբոզ, փոխանցում է ինֆորմացիան
4. Երկշղթա է, պարունակում է դեզօքսիռիբոզ և ինֆորմացիա

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Եթե ԴՆԹ—ի մոլեկուլում Ա նուկլեոտիդի քանակը 28% -է, ապա քանի՞ տոկոս է Գ նուկլեոտիդի պարունակությունը:

17. Քանի՞ քրոմոսոմ է լինում մարդու սոմատիկ բջիջներում միտոզից հետո:

18. Օվոգենեզի արդյունքում երկու դիպլոիդ առաջնային սեռական բջիջներից քանի՞ լիարժեք գամետ է ստացվում :

19. Քանի՞ քրոմոսոմ է պատասխանատու շների սեռի ժառանգման համար, եթե շների քրոմոսոմների դիպլոիդ հավաքակազմը 78-է:

20. Քանի՞ ԴՆԹ-ի մոլեկուլ է պարունակում հոմոլոգ քրոմոսոմների զույգը միտոզի մետաֆազում: